

Учреждение

Г. 6. 6. 6. 6. 6.

84
—
У-89

7915

92/2
542

1916 № 753.

№ 3 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ «ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐԻ» 11 9² NOV 2010



Մ Ո Պ Ա Մ Ա Ն

Գ Ե Ր Ի Ն Ե Ր Ը

Պատմուածք քրան-պրուսական պատերազմից

ՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԵՐԻԱՆԴ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ



84
Մ-89



ВНЕДРОУЧКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Տպարան Ն. Ազանեանի, Պոլից. 7
1915

1947

8947
№ 3

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ «ԵՐԿՈՒ ԳՈՅՐԵՐԻ» № 3

84
5-89

Մ Ո Պ Ա Մ Ա Ն

20 APR 2008

Գ Ե Ր Ի Ն Ե Ր Ը

Պատմուածք քրան-պրուսական պատերազմից

ՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԵՐԻԱՆԴ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Յպարան Ն. Ազանեանի, Պոլից. 7
1915

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

04.07.2013

6800

04.07.2013

Գ Ե Ր Ի Ն Ե Ր Ը

Անտառում ոչ մի շոռակ չէր լսուում, բացի ծառերի վրայ թափուող ձիւնի մեղմ սուսափիւնից: Ձիւնը գալիս էր կէսօրից ի վեր, այն մանրաշաղ, բարակ ձիւնը, որ ծածկում էր ծառերի ճիւղերը սառցային խառով և ձգում էր մեռած տերևների վրայ մի թեթև արծաթեայ ծածկոց, սփռում էր ճանապարհի վրայ մի անագին, կակուղ և սպիտակ գորգ և թանձրացնում էր ծառերի այդ ովկիանոսի անսահման լուսթիւնը:

Անտառապահի դռան առաջ մի ջահէլ կիւն, թևերը մերկ, փայտ էր կոտրում կացնի հարուածներով մի քարի վրայ: Նա բարձրահասակ էր, բարակ և հուժկու, անտառների այդ աղջիկը, անտառապահների աղջիկ և կիւն:

Տան ներսից լուսեց մի ձայն:

— Մենք միայնակ ենք այսօր, Բերտինա, ամանակ է տուն մտնել, անհա և գիշերը. գուցէ այստեղ թափառում են պրուսացիները և գայլերը:

Ջահէլ փայտահատ կիւնը պատասխանեց, ճշգրիտով մի հաստ քեթիւնով ուժգին հարուածներ



59445.66

րով, որոնցից, երբ նա ձեռքերը վեր էր շարժում՝ բարձրանում էր նրա կուրծքը.

— Ես վերջացրի, մայրիկ: Ահա իսկոյն կգամ դեռ լոյս է:

Եւ վեր առնելով փայտի ու տաշեղի մի ամբողջ խափտ՝ նա մտաւ տուն, դարսեց փայտը բուխարու մէջ, ապա գնաց փակելու կաղնեայ անագին փեղկերը և դրեց դռան փականքները:

Նրա մայրը, կնճիռներով ծածկուած մի պառաւ, որին տարիքները վախկոտ էին դարձրել՝ մանում էր կրակի առաջ:

— Ես չեմ սիրում, ասաց նա, երբ հայրիկը տանը չէ: Երկու կանայք ոչինչ չեն կարող անել: Զահէլ կինը պատասխանեց.

— Ահ, ես շատ լաւ կարող եմ սպանել մի գայլ կամ մի պրուսացի:

Եւ նա ցոյց էր տալիս աչքով մի մեծ ատըրճանակ, որ կախուած էր օջախի պատից:

Նրա մարդը զինուոր էր տարուել պրուսական արշաւանքի հէնց սկզբում, և երկու կանայք միայնակ էին մնացել հօր հետ, ծերունի անտառապահ Նիկօլայ Պիշօնի հետ, որի մականունն էր «Երկարաձիգ» և որը մերժել էր յամառութեամբ թողնել իր հիւղակը անտառու և տեղափոխուել քաղաք:

Ամենամօտ քաղաքը Րէտէլն էր, մի հին ամբողջ, շինուած մի ժայռի վրայ: Այստեղ դեռ

կենդանի էր հայրենասիրութեան ոգին, և քաղաքացիները որոշել էին դիմադրել յափշտակիչներին, ամբանալ իրանց սներում և դիմադրել պաշարման, հետևելով քաղաքի հին աւանդութիւններին: Արգէն երկու անգամ, Հենրիկոս Դ-ի և Լուդիվիկոս ԺԴ-ի ժամանակ, Րէտէլի բնակիչները հռչակուել էին հերոսական պաշտպանութեամբ: Այս անգամ էլ նրանք որոշեցին ցոյց տալ իրանց քաջութիւնը, կամ թաղուել պարիսպների փլատակների տակ:

Եւ այդպէս, նրանք գնել էին թնդանօթներ և հրացաններ, կազմել էին հեծելախումբ, զօրախմբեր և զօրագնդեր, և ամեն օր զինավարժութիւն էին անում զինուորական հրապարակի վրայ: Ամենքը, հացագործը, մանրավաճառ, նօտար, փաստաբան, հիւսն, գրավաճառ, նոյն իսկ դեղագործները մարզում էին զինուորական կրթութիւնների մէջ հերթով, որոշ ժամերում, մի պաշտօնաթող դրագունական ենթասպայի, պ. Լաւիյնի հրամանատարութեամբ, որ այժմ պալանտերիական սպրանք ծախող էր դարձել, ամուսնացած լինելով պ. Ռավադանի աղջկայ հետ և ժառանգած լինելով նրա խանութը, նրա մահից յետոյ:

Նա ստանձնել էր պաշտպանութեան գործը, առել էր հրամանատարի կոչումը. և որովհետև բոլոր երիտասարդները գնացել էին մտել զօր-

քի մէջ՝ նա հրաւիրել էր մասնակցութեան բո-
լոր նրանց, որոնք համակրում էին պրուսացի-
ներին դիմադրութիւն ցոյց տալու գաղափարին։
Հաստափորները գնում էին փողոցով թեթև,
մարմնամօրզական քայլերով, իրանց ճարպը հա-
լեցնելու և շնչասպառութեան առաջն առնելու
համար, իսկ թոյլերը բեռներ էին շալակում,
իրանց մկարունքը զօրեղացնելու համար։

Եւ սպասում էին պրուսացիներին։ Բայց
պրուսացիները չէին երևում. սակայն նրանք
հեռու չէին, որովհետև երկու անգամ նրանց
լրտեսները արդէն անցնելով անտառի միջով՝
հասել էին մինչև անտառապահ Նիկոլայ Պիշօնի
տունը։ Ծերունի պահապանը, որ աղուէսի նը-
ման վազում էր՝ եկել էր զգուշացնելու քաղա-
քը։ Պարիսպների վրայ դարսեցին թնդանօթ-
ները, բայց թշնամին չէր երևում։

«Երկայնածիբի» բնակարանը ծառայում էր
իրբե գննողական կայարան, Աւրլինի անտա-
ռում։ Անտառապահը շաքաթը երկու անգամ
քաղաք էր գնում պաշարեղէնի համար և տեղե-
կութիւններ էր տանում ամբողջ բնակիչներին
շրջակայքի մասին։

Այդ օրը նա գնացել էր քաղաք յայտնելու,
թէ գերմանական հետևակ զօրքի մի փոքրիկ

խումբ նախընթաց օրը կէսօրից յետոյ, ժամը
երկուսի մօտ, կանգ էր առել իր տան առաջ և
յետոյ գրեթէ իսկոյն վերադարձել էր։ Խմբի
հրամանատար ենթասպան Փրանսերէն էր խօ-
սում։

Ծերունին քաղաք գնալիս՝ գայլերի երկիւ-
ղից, որոնք սկսում էին կատաղի դառնալ, միշտ
իր հետ վեր էր առնում երկու շներին և ամեն
անգամ խորհուրդ էր տալիս երկու կանանց փա-
կուել տան մէջ՝ հէնց որ գիշերը վրայ կհասնի։
Չահէլ կինը ոչ մի բանից վախ չունէր, բայց
պառաւր, միշտ զոդում էր և կրկնում.

— Սրա վերջը վատ կլինի, կտեսնէք որ վատ
կը լինի։

Այդ երեկոյեան, նա սովորականից աւելի
անհանգիստ էր։

— Ժամը քանիսին կվերադառնայ հայրդ, —
հարցրեց նա։

— Ո՛հ, տասն և մէկից ոչ առաջ. երբ նա
ճաշում է հրամանատարի մօտ՝ նա միշտ ուշ է
վերադառնում։

Եւ նա պատրաստում էր արդէն օջախի
վրայ դնել կաթսան ապուր եփելու համար՝ երբ
յանկարծ լսեց մի անորոշ աղմուկ, որ հասնում
էր նրան ծխնելոյզի խողովակով։

Նա մրմնջաց.

— Ահա անտառում քայլում են. եօթ-ութ
մարդ կլինի առնուազն։

Մայրը զարհուրած կանգնեցրեց ճախարակի պտոյտ տալը և մըմնջաց.

— Ո՛հ, Աստուած իմ, և հայրդ էլ տանը չէ:

Նա դեռ չէր վերջացրել իր խօսքը՝ երբ սաստիկ հարուածներ ցնցեցին դուռը:

Եւ որովհետեւ կանայք մնացել էին լուռ և անշարժ՝ մի գօրեղ և կոկորդային ձայն բողբոջ.

— Բացէք:

Յետոյ, մի փոքր լռութիւնից յետոյ, միևնոյն ձայնը կրկնեց:

— Բացէք, եթէ ոչ դուռը կ'կոտրեմ:

Բերտինան թագցրեց իր գրպանում ծխնելոյղի մեծ ատրճանակը, ապա ականջը դնելով դռան կողպէքի ծակին՝ հարցրեց.

— Ո՞վ էք:

Ձայնը պատասխանեց.

— Երեկուայ զօրախումբն ենք:

Ձահէլ կ'ինը կրկնեց.

— Ի՞նչ էք կամենում:

— Ես կ'որցրել եմ ճանապարհը առաւօտից ի վեր անտառում, զօրախմբիս հետ միասին: Բացէք, կամ դուռը կ'կոտրեմ.

Անտառապահի կ'ինը ուրիշ ելք չունէր. նա շտապով քաշեց փականքը և բանալով ծանր դուռը՝ նա նկատեց ձիւնի գունատ ստուերում վեց մարդ, այն վեց պրոուսացի զինուորներին,

որոնք եկել էին նախընթաց օրը: Նա արտասանեց հաստատ ձայնով.

— Ինչի՞ համար էք եկել այսպիսի ուշ ժամանակ:

Ենթասպան պատասխանեց.

— Ես մոլորուել եմ, բոլորովին մոլորուել անտառում. ես ճանաչեցի այս տունը: Ոչ ես, ոչ զօրախումբս ոչինչ չենք կերել առաւօտուանից ի վեր:

Բերտինան յայտնեց.

— Բանն այն է, որ այս երեկոյեան ես բոլորովին միայնակ եմ մօրս հետ:

Ձինուորը, որ մի բարեսիրտ մարդ էր երևում՝ պատասխանեց.

— Վնաս չունի. մենք ձեզ ոչինչ վատութիւն չենք անի, միայն կերակրեցէք մեզ: Մենք մեռնում ենք քաղցածութիւնից և յոգնածութիւնից:

Անտառապահի կ'ինը յետ քաշուեց.

— Մտէք, ասաց նա:

Նրանք մտան ձիւնաշաղախ և երևում էին յոգնած և ուժասպառ:

Երիտասարդ կ'ինը ցոյց տուեց նրանց մեծ սեղանի երկու կողմից դրուած փայտեայ նըստարանները:

— Նստեցէք, ասաց նա, ես ձեզ համար իսկոյն ապուր կեփեմ. ճշմարիտ, որ դուք շատ խղճալի կերպարանք ունիք:

Ապա նա նորից գրեց դռան փականքը:

Նա ջուր ածեց կաթսայի մէջ, նորից գցեց նրա մէջ կարագ և գետնախնձոր, յետոյ վէր բերելով ծխնելոյզից կախուած մի մեծ կտոր ապխտած ճարպ՝ կտրեց նրա կէսը և կախեց ապուրի մէջ:

Վեց մարդիկ հետևում էին բոլոր նրա շարժումներին. սովածութիւնից բորբոքուած աչքերով նրանք գրել էին իրանց հրացանները և սահաւարտները մի անկիւնում և սպասում էին խելօք՝ ինչպէս երեխաները դպրոցի նստարանների վրայ:

Մայրը վերսկսեց իր ճախարակը մանել, ձգելով ամեն բոպէ մոլորուած ակնարկներ ներս խուժած զինուորների վրայ: Այլ ևս ոչ մի ձայն չէր լսում, բայց միայն ճախարակի թեթև աղմուկը, կրակի ճարձատիւնը և եռացող ջրի մըրմնջիւնը:

Բայց յանկարծ մի տարօրինակ աղմուկ սարսուեցրեց նրանց բոլորին. մի տեսակ խռպոտ ձայն դռան ներքև, որ նման էր գազանի զօրեղ և խռնացնող շնչառութեան:

Գերմանացի ենթասպան մի ոստում գործեց դէպի հրացանները. Անտառապետի կինը կանգնեցրեց նրան ձեռքի շարժումով և ժպտալով ասաց.

— Գայլերն են, նրանք էլ ձեզ նման են, թափառում են և քաղցած են:

Թերահաւատ մարդը կամեցաւ ստուգել, և հէնց որ դուռը բացուեց՝ նա նկատեց երկու մեծ մոխրագոյն գազաններ, որոնք արագաբար և քառասմբակ փախչում էին:

Նա վերադարձաւ վնթփնխալով.

— Երբէք չէի հաւատայ:

Եւ նա սպասեց որ ընթրիքէ պատրաստուի:

Եւ նրանք կերան ապուրը ազահաբար, բերանները պատռելով մինչև ականջները, որպէս զի որքան կարելի է շատ կլանեն, և նրանց կըլոր աչքերը բացւում էին ծամելիքների հետ միասին, միևնոյն ժամանակ իրանց կոկորդներից հանում էին ինչ-որ տարօրինակ զզուելի ձայներ:

Երկու կանայք լռելեայն նայում էին մեծ, շէկ մօրուքների արագ շարժումների վրայ, և գետնախնձորները կարծես խորասուզւում էին այդ շարժուն բերդի ալիքների մէջ:

Բայց որովհետև նրանք ծարաւ էին՝ անտառապետի կինը իջաւ նկուղը, նրանց համար ըմպելիք բերելու: Նա այնտեղ երկար մնաց. դա մի փոքր կամարակապ նկուղ էր, որ, ինչպէս ասում էին՝ յեղափոխութեան ժամանակ բանտի և զնդանի տեղ էր ծառայել: Նրա մէջ կարելի

էր մտնել խոհանոցից մի նեղ սանդուխի միջով, որ ծածկուում էր մի կափարիչով:

Երբ Բերտինան վերադարձաւ՝ նա ծիծաղում էր, ծիծաղում էր բոլորովին միայնակ, խորամանկ ձևով: Եւ նա տուեց գերմանացիներին իւր բերած գինու կուժը:

Յետոյ, նա ընթրեց իր մօր հետ, խոհանոցի միւս ծայրում:

Զինուորները վերջացրել էին ընթրիքը և բոլոր վեցն էլ սկսել էին նիրհել սեղանի շուրջը: Երբեմն երբեմն նրանցից մէկի ձակատը ըսկսում էր կպչել տախտակին մի խուլ աղմուկով, և մարդը յանկարծ զարթնելով՝ ոտքի էր ցատկում:

Բերտինան ասաց ենթասպային.

Պառկեցէք կրակի առաջ, այդտեղ ամենքի համար տեղ կլինի: Ես մօրս հետ կը գնամ իմ սենեակը:

Եւ երկու կանայք բարձրացան վերևի դրստիկոնը: Լսուում էր, թէ ինչպէս նրանք փակեցին իրանց դուռը բանալիով և մի քանի ժամանակ ման էին գալիս սենեակում. ապա՝ այլևս նրանք ոչ մի աղմուկ չհանեցին:

Պրուսացիները պառկեցին յատակի վրայ, ոտները դէմ արին կրակին և գլխների տակ դրին իրանց ծալած վերարկուները, և շուտով բոլոր վեց հոգին էլ սկսեցին խռմփացնել վեց

տարբեր, սուր կամ խուլ, բայց զօրեղ և անընդհատ ձայնով:

* * *

Անշուշտ նրանք քնած էին երկար ժամանակից ի վեր, երբ յանկարծ թնդաց մի հրացանի ձայն, այնքան սաստիկ, որ կարծես հարուածը ուղղուած էր տան պատերի դէմ: Զինուորները իսկոյն վեր ցատկեցին, բայց երկուսը թնդիւններ ճայթեցին և նրանց յետևից էլի երեք ուրիշը:

Վերևի դստիկոնի դուռը մեծ աղմուկով բացուեց, և անտառապետի կինը շապկանց, տաբուպիկ, մի կարճ շրջագետտ հագած և ճրբազը ձեռքին, վախից խելագարի նման, երեւաց դռան շեմքում: Նա կակազեց.

— Փրանսացիներն են. նրանք մօտ երկու հարիւր հոգի են: Եթէ ձեզ այստեղ գտնեն՝ տունը կայրեն: Շուտով իջէք նկուղի մէջ և աղմուկ մի հանէք: Եթէ աղմուկ հանէք՝ մենք կորած ենք:

Ենթասպան բոլորովին շշկուած՝ մրմնջաց.

— Լաւ, լաւ, ճրտեղից պէտք է իջնել:

Ջահէլ կինը շտապով բարձրացրեց նեղ և քառանկիւնի կափարիչը, և վեց մարդիկ անհետացան պտուտաւոր փոքր սանդուխներով և մրտան գետնի տակը մէկը միւսի յետևից, շօշափելով ոտքով սանդուխի աստիճանները:

Բայց երբ վերջին սաղաւարտի ծայրը ան-
յայտացաւ՝ Բերտինան վրայ բերեց կաղնեայ
ծանր կափարիչը, հաստ՝ իբրև մի պատ, ամուր՝
իբրև պողպատ, և զնդանի կողպէքով պտտեցրեց
բանալին երկու անգամ. ապա սկսեց ծիծաղել
անձայն յաղթական ծիծաղով և կամենում էր
խելագարի նման պարել իր բանտարկեալների
գլխի վրայ:

Նրանք ոչ մի աղմուկ չէին հանում այդ
ամուր արկղի մէջ փակուած, մի քարեայ արկ-
ղի մէջ, ուր օդը թափանցում էր մի երկաթէ
ձողերով պատուած օդանցքի միջով:

Բերտինան նորից կրակ արեց օջախում,
դրեց նրա վրայ իր կաթսան և սկսեց նոր ար-
գանակ պատրաստել, մրմնջալով:

— Հայրս յոգնած կլինի այս գիշեր:

Ապա՝ նա նստեց և սպասեց: Միայն ժա-
մացոյցի ձօձանակի միակերպ գարկելը ընդհա-
տում էր լռութիւնը, կանոնաւոր դիկ-դակով:

Երբեմն երբեմն ջահէլ կինը մի անհամբեր
նայուածք էր ձգում ժամացոյցի սլաքի վրայ,
կարծես ասելով.

— Ի՞նչ ուշ է բայում:

Սակայն մի փոքր ժամանակից յետոյ նրան
թուաց, որ ներքեում փսփսում են. նկուղի կա-
մարի միջով, նրա ախանջին հասան խուլ և ան-
որոշ խօսքեր: Պրուսացիները սկսել էին գլխի

ընկել նրա խորամանկութեան մասին, և շուտով
ենթասպան բարձրանալով փոքր սանդուխից՝
բռունցքով խփեց կափարիչին: Նա նորից բռուց.

— Բայ:

Կինը վեր կացաւ, մօտեցաւ և նմանեցնելով
իր ձայնը նրա արտասանութեան՝ հարցրեց.

— Ի՞նչ էք կամենում:

Բայ:

— Ձէ բացուում:

Մարդը զայրացաւ:

— Բայ, կամ կկոտորեմ դուռը:

Կինը սկսեց քրքշալ:

— Կստրիր, կոտրիր, աղաւնեակս:

Նա սկսեց խփել իր հրացանի կոթով իր
գլխի վրայ փակուած կաղնեայ կափարիչին:
Բայց այդ կափարիչը կարող էր դիմանալ նոյն
իսկ ամենահզօր հարուածներին:

Անտառապետի կինը լսեց նրա իջնելը: Ահա
զինուորները եկան մէկ մէկու ետևից փորձելու
իրանց ոյժը և քննելու փականքը. բայց տես-
նելով որ իրանց ջանքերը ապարդիւն են՝ նրանք
նորից ցած իջան և սկսեցին խօսել իրանց մէջ:

Ջահէլ կինը լսում էր նրանց, ապա նա գը-
նաց բացեց դրսի դուռը և սկսեց ախանջ դնել
խաւարի մէջ:

Մի հեռու հաջոց հասաւ նրա ախանջին: Նա
սկսեց սուլել, ինչպէս մի որսորդ, և գրեթէ

խկոյն երկու շներ դուրս թռան ծառերի ետեւրանց վախեցրել էր ատրճանակի հարուածնեւից և աղմկալի ուրախութեամբ ոստոսացիներով և փակել նկուղի մէջ: Նրա շուրջը: Նա բռնեց նրանց վզից և պահեց նրանց, որպէսզի թոյլ չտայ վազել. ապա իր բոլոր ոյժով աղաղակեց.

— Ա՛ռ, հայրիկ:

Մի շատ հեռաւոր ձայն պատասխանեց.

— Ա՛ռ, Բերտինա:

Նա սպասեց մի քանի վայրկեան, ապա կըրկնեց.

— Ա՛ռ, հայրիկ:

Չայնը աւելի մօտիկից կրկնեց.

— Ա՛ռ, Բերտինա:

Կինը կրկնեց.

— Օգնեցքի մօտով մի անցնիր. նկուղի մէջ պրուսացիներ կան:

Ծերունու մեծ ուրուականը գծագրուեց տան ձախ կողմի վրայ, երկու ծառերի մէջ տեղ: Նա հարցրեց անհանգիստ յուզմունքով.

— Պրուսացիները նկուղում: Ի՞նչ ես անում նրանք այնտեղ:

Չահէլ կինը սկսեց ծիծաղել.

— Երեկուաններն են. նրանք մոլորուել էին անտառում, և ես ուղարկեցի նրանց նկուղը, զովանալու համար:

Եւ նա պատմեց արկածը, թէ ինչպէս ինքը

ժամին:

Կինը պատասխանեց.

— Գնա՛, կանչիր պարոն Լավիյնին խմբի հետ: Նա նրանց կբանտարկէ: Տես թէ որքան կուրախանայ նա:

Ծերունի Պիշօնը ժպտաց.

— Ճշմարիտ որ ուրախ կլինի:

Աղջիկը շարունակեց.

— Ապուրդ պատրաստ է, շուտով կեր և անմիջապէս ճանապարհ ընկիր:

Ծերունի անտառապահը սեղանի նստեց և սկսեց ուտել ապուրը, երկու լիքը աման էլ ղնելով իր շների համար:

Պրուսացիները լսելով խօսակցութեան ձայն՝ լռել էին:

Մի քառորդ ժամից յետոյ «Երկայնաձիգը» ճանապարհ ընկաւ: Անտառապահի կինը գլուխը ձեռների վրայ դրած սպասում էր:

* * *

Բանտարկեալները սկսում էին յուզուել: Այժմ նրանք աղաղակում էին, կանչում էին, անդադար հրացանի կոթերով կտտաղի հարուած-

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВУСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԵՏԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՆԱԿ
ԴՍՍ. ԵՆԾԼԻՈՏԵՂ
ՀՄՍՈՎ-ԱՅՄ Ս. Ք

ներ էին խփում նկուղի անխախտ կափարիչին:

Ապա նրանք սկսեցին հրացաններ արձակել, օդանցքի միջով, յուսալով որ նրանց ձայնը կը լսուի, եթէ մի որևէ գերմանական զորախումբ անցնելիս լինէր շրջակայքում:

Անտառապահի կինը չէր շարժուում, բայց այդ բոլոր աղմուկը գրգռում և զայրացնում էր նրան: Մի շար բարկութիւն գարթնում էր նրա մէջ. նա պատրաստ էր սպանել այդ ստահակներին՝ լռեցնել տալու համար:

Ապա, երբ նրա անհամբերութիւնը աճեց՝ նա շարունակ նայում էր ժամացոյցին, հաշուելով րոպէները:

Արդէն մի ժամ ու կէս կար որ հայրը մեկնել էր: Այժմ նա երևի հասել էր քաղաքը: Նրբան թւում էր, որ ինքը տեսնում է նրան. ահա նա պատմում է իրողութիւնը պ. Լավիյնին, որ գունատում է յուզմունքից և հրամայում է իւր ազախնուն բերել իր համազգեստը և իր զէնքը: Անտառապահի կնոջ թւում էր, որ նա լսում է, թէ ինչպէս թմբուկը խփում են փողոցներում: Վախեցած գլուխներ երևում են պատուհաններում: Քաղաքացի զինուորները դուրս են վազում տներից դեռ չհագնուած, շնչասպառ, կոճկելով իրանց համազգեստները փողոցում և գինուորական քայլերով գնալով դէպի հրամանատարի տունը:

Ապա զօրախումբը իրան առաջնորդ ունենալով «Երկայնաձիգ»-ին՝ ճանապարհ է ընկնում գիշերը ձիւնի մէջ, ուղղուելով դէպի անտառը: Բերտինան նայում էր ժամացոյցին. «Նրանք կարող են այստեղ լինել մի ժամից յետոյ»:

Մի ջղային անհամբերութիւն բռնել էր նրբան ամբողջովին. րոպէները նրան անվերջանալի էին երևում: Ո՛հ ինչքան երկար էր տևում: Վերջապէս սլաքը ցոյց տուեց այն ժամանակը, որ նա նշան էր արել նրանց գալու համար:

Եւ նա նորից բացեց դուռը և սկսեց ականջ դնել, թէ արդեօք գալիս են: Նա նկատեց մի ստուեր, որ զգուշութեամբ ման էր գալիս. նա վազեց և մի ազդակ բաց թողեց: Դա նրա հայրն էր, որ ասաց.

—Նրանք ինձ առաջ ուղարկեցին, իմանալու համար, արդեօք չկայ որևէ փոփոխութիւն:

—Ո՛չ, ոչ մի: Այն ժամանակ հայրը իւր հերթին արձակեց խաւարի մէջ մի հնչիւն և երկարատև սուլոց: Եւ շուտով նկատուեց մի գորշ բան, որ գալիս էր ծառերի տակ, յամրաքայլ. դա առաջապահ գունդն էր, տասն հոգուց բաղկացած:

«Երկայնաձիգ»-ը ամեն րոպէ կրկնում էր.

—Մի անցնէք օդանցքի առաջով:

Եւ առաջին հասնողները ցոյց էին տալիս նոր եկողներին վտանգաւոր օդանցքը:

Վերջապէս գլխաւոր խումբը երկաց, ընդամենը երկու հարիւր հոգի, որոնց ամեն մէկը երկու հարիւր փամփուշտ ունէր:

Պ. Լավիյնը յուզուած, դողալով, շարեց

նրանց, այնպէս որ ամբողջ տունը պաշարուեց, թողնելով ազատ մի լայն տարածութիւն փոքրիկ սև ծակի առաջ, որտեղից օդը մտնում էր նկուղը:

Ապա նա մտաւ բնակարանը, հանգամանօրէն հարց ու փորձ արեց թշնամու ոյժի և դրութեան մասին, որը այժման խաղաղ և լուռ էր, որ կարելի էր կարծել, թէ նա անհետացել է օդանցքի միջով:

Պ. Լավիյնը ոտով խփեց կափարիչին և հարցրեց.

— Պարոն պրուսացի սպայ:

Գերմանացին չպատասխանեց:

Հրամանատարը կրկնեց.

— Պարոն պրուսացի սպայ:

Ի զուր եղաւ: Քսան ըրպէ նա հրաւիրեց լուսեաց սպային անձնատուր լինել իր գէնքերով և մթերքով, խոստանալով նրան և ընկերներին ազատ կեանք և զինուորական պատիւներ: Բայց նա չստացաւ համաձայնութեան կամ թշնամութեան ոչ մի նշան: Դրութիւնը դժուարանում էր:

Քաղաքացի զինուորները գարշապարները խփում էին ձիւնին, ձեռքով գարկում էին միմեանց ուսերին, ինչպէս անում են կառապանները տաքանալու համար, և նայում էին օդանցքին, նրա առաջից անցնելու մի անզուսպ ցանկութեամբ:

Վերջապէս նրանցից մէկը, Պօղըրվէն կոչուած, որ շատ շարժուն և փոքր էր՝ սիրտ առաւ և որոշելով այդ հերոսութիւնն անել՝ անցաւ օդանցքի առաջով, վազ տալով իբրև եղջերու:

րու: Փորձը աշողուեց. Գերինները կարծես մեռած էին:

Մի ձայն գոչեց.

— Այնտեղ ոչ ոք չկայ:

Եւ մի ուրիշ զինուոր անցաւ ազատ տարածութիւնը, վտանգաւոր ծակի առաջ: Այն ժամանակ սկսուեց մի խաղ: Ամեն մի ըրպէ մի մարդ վազում էր, անցնում էր մէկ խմբից միւսը, ինչպէս անում են երեխաները՝ երբ աչքակապուկ են խաղում, և նետում էր իւր ետևից ձիւնակոյտեր, այնքան արագաբար շարժում էր իւր ոտքերը. Տաքանալու համար, վառել էին մի քանի մեծ խարոյկներ, չոր փայտերից, և պայծառ բոցը լուսաւորում էր ազգային զօրագունը կազմող և աջ բանակից ձախ բանակը վազող քաղաքացիների ուրուականները:

Մէկը գոռաց.

— Հերթը քոնն է, Մալուազօն:

Մալուազօնը մի հաստ հացագործ էր, որի փորը իւր ընկերների ծիծաղն էր շարժում: Նա վարանում էր: Ամեն կողմից սկսեցին նրան ծաղրել: Այն ժամանակ նա, մի կողմ թողնելով վախը, սկսեց վազ տալ մարմամարդական փոքրիկ և կանոնաւոր քայլով, հեալով և իր հաստ փորը շարժելով:

Ամբողջ զօրախումբը արտասուելու չափ ծիծաղում էր: Նրան խրախուսելու համար գոռում էին.

— Բրավօ, Մալուազօն, բրավօ:

Նա գրեթէ ճանապարհի երկու երրորդական մասն անցել էր՝ երբ մի երկար, արագ և կարմիր բոց ժայթքեց օդանցքից: Օդը թնդաց, և

հաստափոր հացագործը քթի վրայ տարածուեց գետին, զարհուրելի աղաղակ արձակելով:

* * *

Ոչ ոք չվագեց նրան օգնելու, և նա ըստիպուած էր շորեքթաթ քաշ գալ ձիւնի վրայ, հեծեծալով, և երբ անցաւ վտանգաւոր գծից՝ ուշաթափ եղաւ: Գնդակը մտել էր նրա ազդրի մէջ, վերեւ մասում:

Երբ առաջին վախը և շփոթութիւնը անցաւ՝ մի նոր ծիծաղ բարձրացաւ:

Բայց Լավիյն հրամանատարը երևաց անտառապահի տան շեմքի վրայ: Նա իր մտքում կազմել էր յարձակման մի ծրագիր, ուստի և թընդուն ձայնով հրամայեց.

— Թող առաջ գան ցինկ շինող Պլանչիան և իր բանուորները:

Երեք հոգի մօտեցան:

— Հանեցէք տան բոլոր շրորդանները:

Մի քառորդ ժամում բերին հրամանատարին քսան մեղր շրորդան:

Այն ժամանակ ձեռք առնելով նախազգուշութեան բոլոր միջոցները՝ նա հրամայեց մի փոքրիկ կլոր ծակ բանալ կափարիչի մէջ և այդ ծակը միացնելով ջրանի հետ շրորդանների միջոցով՝ նա բացագանչեց ուրախացած.

— Մենք կառաջարկենք խմել պարոն գերմանացիներին:

Հիացման մի աղմկալի հուռայ թնդաց ուրախութեան և քրքիջների աղաղակներով: Հրամանատարը կազմակերպեց բանուորների փոք-

րիկ խմբեր այդ աշխատանքի համար, որոնք պէտք է ամեն հինգ ըոպէն մի անգամ փոխուէին: Ապա նա հրամայեց.

— Ներս վագեցրէք ջուրը:

Եւ երբ երկաթէ անիւը պտտեցրին՝ ջուրը գնալով շրորարդանների միջով՝ սկսեց թափուել նկուղը սանդուխների վրայով, բարձր ժայռից գլորուող ջրվէժի խլացուցիչ շփնդով:

Սպասեցին:

Անցաւ, մի ժամ, երկու, երեք ժամ: Հրամանատարը տենդոտ անհամբերութեամբ քայլում էր խոհանոցում, երբեմն երբեմն ականջը կը պնջնելով գետնին, հետամուտ լինելով գուշակել, թէ ինչ է անում թշնամին և հարցնելով ինքն իրան, թէ արդեօք շուտով անձնատուր կլինի նա:

Այժմ թշնամին սկսեց յուզուել: Լսւում էր, որ այնտեղ շարժում էին տակառները, խօսում էին և ջրի մէջ ոստոտում:

Ապա, առաւօտեան ժամը ութի դէմ, խողովակից մի ձայն դուրս եկաւ.

— Ես կցանկանայի խօսել Ֆրանսիացի պարոն սպայի հետ:

Լավիյնը պատասխանեց լուսամուտից, առանց շատ դուրս հանելու գլուխը.

— Անձնատուր էք լինում, թէ ոչ:

— Անձնատուր եմ լինում:

— Ուրեմն յանձնեցէք ձեր հրացանները օդանցքի միջով:

Եւ իսկոյն մի զէնք դուրս թռաւ ծակից և ընկաւ ձիւնի մէջ, յետոյ երկրորդը, երրորդը, վերջապէս բոլոր հրացանները: Եւ միննոյն ձայնը յայտարարեց.

—Այլևս ոչինչ չունինք: Շտապեցէք, մենք
խեղդւում ենք:

Հրամանատարը հրամայեց.

—Դադարեցէք,

Ջրհանի անիւը կանգնեց:


Եւ լցնելով խոհանոցը զինուած զինուորնե-
րով՝ նա ծանր կերպով բարձրացրեց կաղնեայ
կափարիչը:

Չորս թրջուած գլուխ երևան եկան, չորս
խարտեաշ և երկար մազերով գլուխ, և շուտով
մէկ մէկու ետևից դուրս եկան վեց գերմանա-
ցիները թրջուած, դողդողալով և խելացնոր:

Նրանց իսկոյն բռնեցին և կապեցին, և ո-
րովհետև երկիւղ էին կրում նոր յարձակումից՝
իսկոյն ճանապարհ ընկան դէպի քաղաք, երկու
մասի բաժանուելով. մի մասը առաջնորդում էր
գերիներին, իսկ միւս մասը տանում էր վիրա-
ւորուած Մալուազօսին, ձողերի վրայ դրած մի
վերմակի մէջ:

Նրանք յաղթական կերպով մտան Բեդէլ
քաղաքը:

Լավիյնը ստացաւ մի պատուանշան՝ պրու-
սական առաջապահ գունդը բանտարկելու հա-
մար. իսկ հաստափոր հացագործը ստացաւ մի
շքանշան՝ թշնամու հետ կռուի ժամանակ ստա-
ցած վէրքի համար:



պ. Միլ 8 25/10/92

3137

ԻՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

u 81
90070

ՀԵՏԵԻՆԵԱԼ ԳՐՔԵՐԸ

- 1) Ալէքսիանոս (սպառ.) 5 կ.
- 2) Վ. Հիւզօ — Աղօթք ամենքի համար . . . 2 կ.
- 3) Մ. Գորկիյ — Դաշտում 5 կ.
- 4) Մոպասան. — Գերիները 10 կ.



ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ Է

Վ. Գարշինի — «ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՂԵՐ»

Դիմել Թիֆլիս «ԳԻՐ» գրավաճառանոց. կամ
 Թարգմանիչին՝ Тифлисъ Александропольская
 ул. № 9. Теръ-Григорьянъ Ервандъ.



6.800